



ԿԱՍ

«Կրթությունն առանց սահմանի»
հասարակական կազմակերպություն

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ
2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
ԱՌԱՐԿԱ՝ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ
ՀԵՂԻՆԱԿ՝ ԿԱՐԻՆԵ ՄԻՔԱԵԼՅԱՆ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ ԶԻՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ.....	5
1.2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ.....	14
ԳԼՈՒԽ 2. ԳԼՈՒԽ 2. ՄԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՓՈՐՁԻՑ.....	21
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	25
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ Տվյալ թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Ժամանակակից կրթության հիմնական խնդիրներից մեկը համարվում է ոչ միայն գիտելիքներին տիրապետելը, այլև այն, որ սովորողները ստանան գործունեության բազմակողմանի փորձ, ինքնուրույն զարգացնեն իրենց կարողությունները՝ իրենց առջև դնելով ուսումնական նպատակներ, նախագծեն դրանց իրականացման ուղիները, վերահսկեն ու գնահատեն իրենց ձեռքբերումները: Այս ամենը պահանջում է կրթական պրակտիկայում ստեղծել որոշակի պայմաններ, որպեսզի սովորողներն ընդգրկվեն ակտիվ ճանաչողական գործունեության մեջ՝ մասնավորապես հետազոտական գործունեության: Ժամանակակից հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի պայմաններում մեծանում է ինքնուրույն մարդկանց պահանջարկը, որոնք կարող են արագ հարմարվել փոփոխվող իրավիճակներին, ստեղծագործաբար մոտենալ խնդիրների լուծմանը: Դպրոցականը պետք է դառնա երկրի սոցիալական և հոգևոր զարգացման ակտիվ մասնակից, ինչը նրանից կպահանջի ինքնուրույնություն դպրոցում, բուհում և ողջ կյանքի ընթացքում նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու գործընթացում: Դպրոցական կրթության գլխավոր արդյունքը պետք է լինի նրա համապատասխանությունը առաջանցիկ զարգացման նպատակներին՝ Դա նշանակում է, որ դպրոցում սովորելու համար անհրաժեշտ է ոչ միայն անցյալի ձեռքբերումները, այլև այն մեթոդները, տեխնոլոգիաները, որոնք ապագայում օգտակար կլինեն: Կրտսեր դպրոցականները պետք է ներգրավված լինեն հետազոտական նախագծերում, ստեղծագործական պարապմունքներում, որոնց ընթացքում նրանք կսովորեն հորինել, հասկանալ և յուրացնել նորը, լինել բաց և ունակ արտահայտելու սեփական մտքերը, կարողանալ որոշումներ կայացնել և օգնել միմյանց, ձևավորել շահեր և գիտակցել հնարավորությունները: Սա պահանջում է կրթական պրակտիկայում ստեղծել որոշակի պայմաններ կրտսեր դպրոցական տարիքից սովորողներին ակտիվ ճանաչողական գործունեության մեջ ընդգրկելու համար, մասնավորապես, հետազոտական կարողություններ:

Այսպիսով, աշակերտների հետազոտական կարողությունները մենք սահմանում ենք որպես մտավոր և գործնական հմտություններ, որոնք կապված են երեխաներին մատչելի նյութում հետազոտության մեթոդների և միջոցների ինքնուրույն ընտրության և կիրառման հետ և համապատասխանում են ուսումնական փուլերին: Այսպիսով, ուսուցիչը նպատակ ունի երեխաներին ներգրավել հետազոտական գործունեության մեջ ոչթե արդյունքի, այլ գործընթացի համար: Հետազոտական կարողությունների զարգացումը դպրոցականներին հնարավորություն է տալիս դասավանդվող տարբեր առարկաներից նյութերի ուսումնասիրության ժամանակ ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, անել համապատասխան վերլուծություններ, ինչը նպաստում է կրտսեր դպրոցականների հետագա ինքնորոշմանը՝ ապահովելով տարբեր գիտությունների, դպրոցական առարկաների և ընդհանրապես ճանաչողության գործընթացների նկատմամբ հետաքրքրության զարգացման հնարավորություններ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ աշակերտների հետազոտական կարողությունների ձևավորման հիմնավորումն է որպես մանկավարժության ժամանակակից հիմնախնդիր և արդյունավետ ուղիների առաջադրումը հանրակրթական դպրոցում

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Հետազոտության նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել խնդրի շուրջ եղած հոգեբանամանկավարժական գրականությունը,
- ուսումնասիրել կրտսե դպրոցականների հետազոտական կարողությունների ձևավորման գործընթացը՝ որպես մանկավարժության արդի հիմնախնդիր,
- բացահայտել դպրոցի մանկավարժական գործընթացի դերը դպրոցական հետազոտական կարողությունների ձևավորման գործում,
- առաջադրել հետազոտական կարողությունների ձևավորման արդյունավետ ուղիներ դպրոցում

**ԳԼՈՒԽ 1. ՀԵՏԱԳՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

**1.1. Սովորողների հետազոտական կարողությունների ձևավորումը որպես
մանկավարժական արդի հիմնախնդիր**

Այսօր հանրակրթական դպրոցի խնդիրը ոչ միայն կրթության բարձր մակարդակի ապահովումն է, այլև աշակերտների մտածողության բազմակողմանի զարգացումը՝ Սա ենթադրում է սովորողների ձեռք բերած գիտելիքներն ինքնուրույն լրացնելու, ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու, սովորածը կենցաղում տեղին և ճիշտ օգտագործելու կարողությունների և հմտությունների ձևավորումը

Հանրակրթության հիմնական խնդիրներից մեկը համարվում է այն, որ դպրոցականները ստանան գործունեության բազմակողմանի փորձ, այլ ոչ թե ուղղակի տիրապետեն գիտելիքների: Այս կարողությունները ձևավորվում են կոմպետենտ-գործունեության մոտեցման հիման վրա, որի համաձայն աշակերտը սովորում է ինքնուրույն հասկանալ, թե ի՞նչ է անում, ինչպե՞ս և որքա՞ն հաջող է այդ ամենը նրան տրվում: Ներկայումս կրթության բաղկացուցիչ մասն է կազմում հետազոտական կարողությունների ձևավորման խնդիրը:

Ուսումը սովորողին մղում է ինքնուրույն հետազոտական աշխատանքի և անհատական ստեղծագործական բնույթի որոնումների՝ Տվյալ պարագայում կրթությունը վերածվում է ոչ միայն վերարտադրողական, այլև ստեղծագործական գործունեության՝ Սա հնարավորություն է տալիս նպատակաուղղել երեխաների հետաքրքրությունները՝ նրանց մեջ արթնացնելով գիտելիքների իմացության ծարավը՝ Սովորողների հետազոտական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից ուսուցման արդիական խնդիրներից մեկն է՝

Տարբեր դասակարգումների ու սահմանումների վերլուծությունը թույլ է տվել առանձնացնել մի քանի մոտեցումներ «հետազոտական կարողություն» հասկացության վերաբերյալ:

Այսպես՝ ինչպես նշում է Դ. Պոյան՝ կարողությունը հմտություն է, որը անհատին հնարավորություն է տալիս կիրառել ունակություններն իր նպատակին հասնելու համար [21, էջ 15]

Հաճախ գիտնականները կարողություն են անվանում այն գիտելիքները, որոնք կիրառվում են պրակտիկայում [14, էջ 7]: Կարողությունների էական առանձնահատկությունը համարվում է նրանց ընդհանրությունը, ինչի արդյունքում դրանք հաջողությամբ իրացվում են փոփոխական և տարատեսակ իրավիճակներում: Լայն իմաստով կարողությունը յուրացված պատրաստվածություն է՝ գիտակցաբար լուծելու այս կամ այն խնդիրները: Կարողությունը նախատեսում է լավ կողմնորոշվածություն նոր պայմաններում և իր մեջ ներառում է ստեղծագործական տարրեր:

Ա. Յ. Կարլաշուկը գտնում է, որ գոյություն ունեն կարողությունների այնքան տեսակներ, որքան կան մարդկային գործունեության տեսակներ [12, էջ 7]: Վ. Ի. Անդրև, Ն. Գ. Նեդոդատկոն, Վ. Վ. Ուսպենսկին, Վ. Պ. Ուշաչովը գիտահետազոտական կարողությունները դիտարկում են առանձին խմբով: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտությունը, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներն աճում են անասելի արագությամբ:

Աշակերտների «հետազոտական կարողություններ» հասկացության տակ հասկանում ենք այն կարողությունը, որը թույլ է տալիս օգտագործել համապատասխան գիտական մեթոդը խնդիրը լուծելու պայմաններում՝ ուսումնահետազոտական առաջադրանքները կատարելիս, ուսումնական աշխատանքի պրակտիկ կարողությունների և հմտությունների ինտելեկտուալ համակարգը, որն անհրաժեշտ է հետազոտությունն անցկացնելու համար, աշակերտի ունակությունը մտավոր և պրակտիկ գործողություններ իրականացնելու համար, որոնք համապատասխանում են ուսումնահետազոտական գործունեությանը և ենթարկվում են ուսումնահետազոտական տրամաբանությանը:

Կարողությունը ձևավորվում է գործունեության ընթացքում: Ընդհանուր հոգեբանության տեսանկյունից՝ գործունեությունը ակտիվ հարաբերության ձև է, որի արդյունքում անհատը կապ է հաստատում արտաքին աշխարհի հետ: Մ. Օ.

Լազարերը նշում է, որ «երեխայի, դեռահասի և ընդհանրապես մարդկային բնույթն այնպիսին է, որ ստեղծագործությունը, այսինքն՝ հետազոտական գործունեությունը, զարգացող մարդու համար գտնվում է առաջին տեղում» [13, էջ 21]:

Վ. Ի. Անդրերը կարծում է, որ ուսումնահետազոտական գործունեության սկիզբը ֆիզիոլոգիական պատկերացումների հիման վրա իրականացվում է անհատի մոտ ի ծնե գոյություն ունեցող հետազոտական ռեֆլեքսի շնորհիվ [5, էջ 38]:

Ռուս ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովը սրա հետ կապված նշում է հետևյալը. «Հազիվ թե բավականաչափ գնահատվեր այն ռեֆլեքսը, որը կարելի կլիներ անվանել հետազոտական ռեֆլեքս կամ ինչպես ես եմ անվանում «որևէ» ռեֆլեքս: Այդ ռեֆլեքսը կապվում է այն հետաքրքրասիրության հետ, որը ստեղծում է գիտություն...» [20, էջ 41]:

Այսպես՝ հետազոտական գործունեության նկատմամբ հետաքրքրությունը մարդուն տրված է բնության կողմից և զարգանում է արտաքին պայմանների փոփոխության հետ մեկտեղ: Գաղտնիք չէ, որ մանկական պահանջմունքը հետազոտական որոնման մեջ պայմանավորված է կենսաբանորեն: Ցանկացած առողջ երեխա ծնվում է որպես հետազոտող: Նոր տպավորությունների հանդեպ ծարավը, հետաքրքրասիրությունը, դիտելու և փորձարկելու ձգտումը, աշխարհի մասին նոր տեղեկությունների ինքնուրույն որոնումներն ավանդաբար դիտարկվում են որպես մանկական վարքագծի կարևորագույն տարրեր: Անընդհատ դրսևորվում է մանկական ակտիվությունը՝ երեխայի նորմալ, բնական վիճակը: Նա տրամադրված է աշխարհաճանաչմանը ու ցանկանում է ճանաչել այն:

Հետազոտական կարողությունները ձևավորվում են համապատասխան գործունեության ընթացքում, որը կազմակերպվում է մանկավարժի կողմից զարգացնող ուսուցման պայմաններում՝ որպես ամբողջական համակարգ: Հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականության վերլուծությունը ցույց է տվել, որ հետազոտական գործունեության վերաբերյալ առկա են մի շարք տարատեսակ մեկնաբանություններ՝ այն դիտարկելով որպես հետազոտական-

ստեղծագործական, որոնողական-հետազոտական, գիտահետազոտական, հետազոտական-պրոյեկտիվ, հետազոտական և ուսումնահետազոտական [25, էջ 33]:

Ուսումնական հետազոտության հասկացության էության բացահայտման համար կարելի է առանձնացնել հետևյալ բնութագրիչները՝

- ուսումնական հետազոտությունը որոնողական ճանաչողական գործունեության գործընթաց է,
- ուսումնական հետազոտությունը միշտ ուղղված է նոր գիտելիքներ ստանալուն, այսինքն՝ հետազոտությունը միշտ սկսվում է որևէ նոր բան սովորելու պահանջմունքից,
- ուսումնական հետազոտությունը ենթադրում է ինքնուրույնություն առաջադրանքերի կատարման ժամանակ,
- ուսումնական հետազոտությունը պետք է ուղղված լինի ուսուցման դիդակտիկ նպատակների իրականացմանը [11, էջ 45]:

Մանկավարժական գրականության մեջ հետազոտական գրականությունը հաճախ կոչվում է գիտահետազոտական (Օ. Ի. Անիսիմովա, Գ. Ի. Արտեմչուկ, Վ. Մ. Գնեդաշև, Լ. Ս. Շելչենկո և այլք), ուսումնահետազոտական (Ա. Յ. Կարլաշչուկ, Ս. Կորշունով, Ն. Գ. Նեդոդատկո, Ի. Վ. Ուսաշովա և այլք) կամ փորձագիտական-հետազոտական (Վ. Ի. Սմագին):

Հաշվի առնելով ուսումնական հետազոտությունների դպրոցական պրակտիկական, ժամանակակից տեխնոլոգիաների, ուսուցման մեթոդների և ձևերի պրակտիկ կիրառումը՝ կարելի է հաստատել, որ ուսումնառության ժամանակակից պայմաններում դպրոցականների ուսումնահետազոտական գործունեությունը գերակայություն ունի գիտահետազոտական գործունեության նկատմամբ:

Այստեղ հարկ էնք համարում անդրադառնալ սովորողների ուսումնահետազոտական գործունեություն հասկացությանը: Այսպես՝ աշակերտների ուսումնահետազոտական գործունեությունը մի կողմից համարվում է ուսումնական գործունեության տարատեսակ, իսկ մյուս կողմից՝ հետազոտական գործունեության բաղկացուցիչ մասը:

Հետազոտական գործունեությունը մտավոր-ստեղծագործական գործունեության տեսակ է, որն իրականացվում է որոնողական ակտիվության և հետազոտական վարքագծի հիման վրա: Նման գործունեության իրականացման գործընթացը ներառում է ուսումնական իրավիճակի (առաջադրանքներ, խնդիրներ), ստացված արդյունքների, մոդելավորման և ուսումնական գործունեության իրականացման վերլուծություն, ինչպես նաև հետազոտական վարքագծի շտկում: Որոնողական ակտիվությունն առաջանում է ոչ ստանդարտ իրավիճակի արդյունքում, այն կարող է ուղղված լինել խնդրահարույց իրավիճակի փոփոխությանը կամ դրա նկատմամբ սեփական վերաբերմունքի փոփոխությանը: Այս գործընթացն ընկած է հետազոտական վարքագծի հիմքում: Ոչ ստանդարտ իրավիճակի հիմնական հատկանիշը որոնողական ակտիվության ակտիվացումն է, քանի որ առաջանում է օբյեկտային անհնարիություն բավարարելու անհատի պահանջները սովորական, ավտոմատացված միջոցներով: Հոգեբանության ոլորտի մասնագետները հետազոտական վարքագիծը դիտարկում են որպես կենսական ակտիվության դրսևորում, որն իրականացնում է զարգացման գործառույթ: Ըստ որոշ հեղինակների՝ հետազոտական վարքագիծը տեղեկատվության որոնումն է, ինչպես նաև վարքագծի այնպիսի տեսակ է, որը հիմնված է որոնողական ակտիվության վրա և ուղղված է ոչ ստանդարտ օբյեկտի կամ անսովոր իրավիճակի լուծման խնդիրների ուսումնասիրությանը [17, էջ 33]: Հետազոտական վարքագծի կոնտեքստում անհատի ստեղծագործությունը հանդես է գալիս առավել ցայտուն դրսևորումներով: Աշխարհը շատ արագ է փոփոխվում, և սա ստիպում է ժամանակակից հոգեբանությանը վերանայել հետազոտական վարքագծի դերն ու նշանակությունը մարդու կյանքում, իսկ մանկավարժությանն ուղղորդում է ուսուցման հետազոտական մեթոդների վերագնահատմանը: Սրա հետ կապված արդիականացվում է կրտսեր դպրոցականների հմտությունների և կարողությունների՝ մասնավորապես հետազոտական կարողությունների զարգացման դերը [20, էջ 31]: Տվյալ կարողություններն անհրաժեշտ են յուրաքանչյուր մարդուն: Հետազոտության միջոցով ճանաչման հանդեպ ներքինը ծնում է հետազոտական վարքագիծ ու ստեղծում է պայման հետազոտական ուսուցման համար:

Հետազոտական գործունեությունն ուղղված է բնության, հասարակության և մտածողության գործընթացների մասին սկզբունքորեն նոր գիտելիքների արտադրությանը: Գիտելիքների վերամշակման գործիքը համարվում է մարդու մտածողությունը: Այն ենթարկվում է որոշակի օրենքների գործունեությանը: Հետազոտական գործունեության գործառույթներից մեկը համարվում է կրթությունը և օբյեկտիվ գիտելիքների տեսական համակարգվածությունը այն գործունեության մասին, որը շրջապատում է մարդուն [24, էջ. 12-18]: Հետազոտական գործունեության բնութագրական հատկանիշը համարվում է այնպիսի տարրերի առկայությունը, ինչպիսիք են հետազոտությունների պրակտիկ մեթոդաբանությունը, սեփական գիտական նյութը, սեփական տվյալների վերլուծությունը և ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ եզրահանգումները [8, էջ 12]: Ընդ որում, հետազոտության ընթացքում առավել կարևոր է համարվում ոչ թե աղբյուրների կազմը, այլ ուսումնասիրվող խնդրի նկատմամբ մոտեցումը:

Դպրոցականների ուսումնական գործունեությունը կառուցվում է տեսական գիտելիքների ներկայացման համապատասխան՝ աբստրակտից կոնկրետ գործողությունների անցնելու միջոցով: Սովորողների մտածողությունը ուսումնական գործունեության ընթացքում ունի ինչ-որ ընդհանուր բան այն գիտնականների մտածողության հետ, ովքեր իրենց հետազոտության արդյունքները ստանում են բովանդակալից ընդհանրությունների և տեսական հասկացությունների օգնությամբ [22, էջ 30]:

Ուսումնահետազոտական գործունեությունը սովորողների գործունեությունն է, որը կազմակերպում է մանկավարժը բացառապես դիդակտիկ միջոցների կիրառմամբ՝ ուղղված օրինաչափ կապերի և հարաբերությունների բացատրությունների ու ապացույցների փնտրտուքին տեսականորեն վերլուծվող փաստերի, երևույթների, գործընթացների միջոցով, որում գերիշխում է միջոցների, ճանաչողական գիտական մեթոդների ինքնուրույն կիրառությունը և որի արդյունքում սովորողներն ակտիվորեն տիրապետում են գիտելիքների, զարգացնում են իրենց հետազոտական կարողությունները և ունակությունները [5, էջ 45]: Ընդ որում, ուսումնահետազոտական գործունեության նպատակն է որոշակի փաստերի, երևույթների, օրինաչափ կապերի և հարաբերությունների

հիմնավորման և բացատրության որոնումը, գործունեության նոր միջոցի որոնումը, իսկ արդյունքը համարվում է սուբյեկտիվ բացահայտումը: Որոնումը ինչ-որ մի բանի հատուկ կազմակերպված հետազոտությունն է, ստեղծագործական աշխատանքը՝ ուղղված գիտության մեջ նորի բացահայտմանը [17, էջ 38]: «Որոնում» հասկացության նման մեկնաբանությունն առավելապես համապատասխանում է հետազոտական գործունեությանը: Իսկ «հետազոտական գործունեություն» հասկացությունն ավելի լայն իմաստ ունի, քան «ուսումնահետազոտական գործունեություն» հասկացությունը: Ուսումնահետազոտական գործունեությունը բնութագրում են որպես սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության բարձրագույն ձև [16, էջ 28]: Սովորողների ինքնուրույն գործունեությունը ուսումնական գործունեությունն է, որն աշակերտների կողմից իրականացվում է տանը կամ դպրոցում ուսուցչի հանձնարարությունները կատարելիս, նրա ղեկավարությամբ, սակայն առանց նրա անմիջական մասնակցության:

Ա. Յ. Կարլաշչուկը ուսումնահետազոտական գործունեությունը դիտարկում է որպես սովորողների գործունեություն, որը կազմակերպում է մանկավարժը դիդակտիկ միջոցների կիրառմամբ՝ ուղղված ուսումնական հետազոտական առաջադրանքների կատարմանը, որում գերակշռում է ճանաչողական գիտական մեթոդների ինքնուրույն կիրառումը և որի արդյունքում սովորողներն ակտիվորեն տիրապետում են գիտելիքների, զարգացնում են իրենց հետազոտական կարողությունները [12, էջ 8]:

Աշակերտի հետազոտական գործունեությունը դրսևորվում է որոշակի իրավիճակում և նրան ստիպում է ինքն իրեն հարց տալ, ձևակերպել վարկածներ և դրանք ստուգել մտավոր և պրակտիկ գործողություններ իրականացնելիս [19, էջ 90]: Սակայն ամեն դեպքում սովորողների հետազոտական գործունեությունը պետք է հիմնվի նորմատիվ միջոցների ամբողջականության վրա, որին մասնավորապես վերաբերում են նախկինում մշակված գիտական տեղեկությունները, գիտական հասկացությունները, հետազոտության օբյեկտներից ստացված վկայությունների համապատասխան մեթոդները (նախևառաջ փորձերի տարբեր տեսակներ) [7, էջ 40-50]:

Այսպիսով, վերոնշյալ բնութագրումների վերլուծությունը հիմք է տալիս փաստելու, որ ուսումնասեռագոտական գործունեությունը սովորողների գործունեությունն է, որը կազմակերպվում է մանկավարժի կողմից ուսուցողական և դիդակտիկ միջոցների կիրառմամբ՝ ուղղված նոր երևույթների և փաստերի բացահայտմանը, որում գերիշխում է ինքնուրույնությունը և որի արդյունքում սովորողները տիրապետում են նոր գիտելիքի՝ զարգացնելով իրենց հետագոտական հմտություններն ու կարողությունները: Իսկ ցանկացած հաջող գործունեության համար անհրաժեշտ են որոշակի կարողություններ: Աշակերտների հետագոտական կարողությունների ձևավորման մակարդակը բնութագրում է համապատասխան գործունեության նկատմամբ հետաքրքրությունը:

Հետագոտական կարողությունը յուրացված ունակություն է՝ այս կամ այն խնդիրները լուծելու համար: Հետագոտական կարողություն ասելով պետք է հասկանալ ուսումնական գործունեության ինտելեկտուալ և պրակտիկ կարողությունները, ինքնուրույն դիտարկումների ունակությունները, որոնք մեծ դերակատարություն ունեն հետագոտական խնդիրները լուծելիս: Հետագոտական կարողությունները դիտարկվում են որպես բարդ կարողություններ, որոնք կազմված են երեք հիմնական բաղկացուցիչներից՝

- մոտիվացիոն, որը դրսևորվում է ճանաչողական հետաքրքրության տեսքով, ձևավորվում է նոր գործունեության ազդեցության ներքո,
- բովանդակային, որը ներառում է հետագոտական գործունեության մասին գիտելիքների համակարգը,
- օպերացիոն, որը ներառում է մարդու մոտ արդեն եղած կարողությունների ու հմտությունների համակարգը:

Այս մոտեցումներից մեկի բացակայության ժամանակ կամ նրա անբավարար ձևավորվածության դեպքում հետագոտական կարողությունների զարգացումը հնարավոր չէ: Ժամանակակից կրթության կարևորագույն խնդիրներից մեկն է ապահովել աշակերտների մոտ աշխարհի դինամիկ և բազմամակարդակ պատկերի ձևավորումը: Դպրոցականների զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է կազմակերպել նրանց մասնակցությունը գործունեության տարբեր

ձևերին, այդ թվում՝ նախագծային և հետազոտական: Կասկած չկա, որ այսօրվա դրությամբ նախագծային և հետազոտական գործունեությունը կարևոր տեղ է զբաղեցնում ուսումնական գործընթացում, քանի որ նպաստում է ազատ անձի ձևավորմանը, որը կարող է ինքնուրույն մտածել, ձեռք բերել և կիրառել գիտելիքներ, մտածել և որոշումներ կայացնել, հստակ պլանավորել գործողություններ և այլն: Ուսուցիչները, ժամանակակից իրողություններին համընթաց քայլելով, իրենց պրակտիկայում ներդնում են նախագծերի մեթոդներ, զբաղվում հետազոտություններով:

Դպրոցն ավարտող աշակերտները հագեցած են տարբեր գիտելիքներով, սակայն չեն կարողանում դրանք գործնականում կիրառել: Հետևաբար ավելի ու ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում այն ուղղությունը, որով նախատեսվում է դպրոցականների մասնակցությունը գիտահետազոտական և գիտագործնական գործունեությանը: Հենց այս ուղղությունն է, որ աշակերտների մոտ ձևավորում է տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտություններն ու ունակությունները: Խնդրի կարևորությունը՝ աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացումը պայմանավորված է երկու հիմնական պատճառներով: Դրանցից առաջինը՝ ուսման նկատմամբ հետաքրքրության նվազումն է՝ «Հաճույքով» սովորելու և առհասարակ սովորելու ցանկությունը նկատվում է առաջին-հինգերորդ դասարանցիների մոտ: Եթե երեխան չի կարողանում հաղթահարել այդ ծանրաբեռնվածությունը, երեխաները պարզապես դադարում են զբաղվել, համակերպվում են անկարողների, անհեռանկար, հետ մնացող դերի հետ:

Երեխաների մի մասի սովորելու ցանկության անկումը յուրատեսակ հոգեբանական պաշտպանություն է ծանրաբեռնվածությունից, ինքնավստահության կորուստ: Երկրորդ պատճառն այն է, որ նույնիսկ այն աշակերտները, ովքեր թվացյալ հաջողությամբ են կատարում ծրագիրը, կորցնում են, երբ հայտնվում են ոչ ստանդարտ ուսումնական իրավիճակում՝ ցուցադրելով արդյունավետ խնդիրներ լուծելու իրենց ամբողջական անկարողությունը: Հետազոտական աշխատանքների արժեքը կայանում է նրանում, որ աշակերտը և ուսուցիչը համատեղ գործունեության ընթացքում սովորում են ամենալայն

խմաստով: Բոլորի համար կարևոր է սովորել կառուցել իրենց աշխատանքը, որոշել և բարձրացնել իրենց ինքնուրույնության մակարդակը: Ուսումնական նախագծի վրա աշխատելու ընթացքում նրանց մոտ մշակվում է սեփական փաստարկված կարծիքը և ստացած գիտելիքները կոնկրետ իրավիճակներում կիրառելու ունակությունը: Կրտսեր դպրոցականների հետազոտական հմտությունների զարգացման խնդիրը շարունակում է արդիական մնալ մինչ օրս: Վերջին շրջանում նկատվում է հանրակրթական դպրոցի աստիճանական տեղաշարժման միտում, որպես նախկինում միակ ինստիտուտ, որտեղ աշակերտը զարգանում է, ստանում է գիտելիքներ, հմտություններ և հմտություններ կենտրոնից դեպի ծայրամաս:

Դա պայմանավորված է նրանով, որ դպրոցն իր բավականին կայացած բովանդակությամբ և ձևերով այլևս չի կարող բավարարել սովորողների անհատական պահանջները կրթության նկատմամբ: Այսպիսով, ուսման շրջանակը (սովորողների գործունեությունը) ավելի լայն է դառնում ուսուցման շրջանակներից (ուսուցչի գործունեությունը): Որպես հանրակրթության կարևորագույն խնդիրներից մեկը դիտվում է աշակերտների կրթվածության այնպիսի մակարդակի հասնելը, որը բավարար կլիներ տեսական կամ կիրառական բնույթի աշխարհայացքային և հետազոտական խնդիրների ինքնուրույն ստեղծագործական լուծման համար:

1.2. Հետազոտական կարողությունների ձևավորման գործընթացը դպրոցական տարիքում

Ժամանակակից տարրական հանրակրթական դպրոցի պրակտիկայում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են կրթական գործընթացի կազմակերպման այնպիսի միջոցների ներդրում, որոնք ուղղված են՝

- ուսման մեջ սովորողների ակտիվ, նախաձեռնողական դիրքորոշման ձևավորման, աշակերտների շրջանում իրենց գիտելիքները ինքնուրույն ձեռքբերելու պայմանների ստեղծմանը,
- սովորողների մոտ ճանաչողական գործունեության, նորը իմանալու ցանկության ու այլ սովորողների հետ սեփական գիտելիքներով կիսվելու համար պայմանների ստեղծմանը,

- ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման համար պայմանների ստեղծմանը:

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է հեռանալ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների դասական մոտեցումից ու անցում կատարել հետազոտական կարողությունների ձևավորման և զարգացման մեթոդների մշակմանը՝

Հետազոտական գործունեության նպատակն այն է, որ աշակերտները տիրապետեն հետազոտության գործառնություններին՝ որպես յուրացման ունիվերսալ միջոց, ինչպես նաև հետազոտական տիպի մտածելակերպի կարողության զարգացմանը: Պետք է նշել, որ երբ աշակերտն ինքնուրույն ձեռք է բերում նոր գիտելիքներ, տեղի է ունենում աշակերտի անձնային դերի ակտիվացում ուսումնադաստիարակչական գործընթացում:

Հանրակրթության գլխավոր խնդիրը համարվում է ընդհանուր ուսումնական հմտությունների և կարողությունների ձևավորումը, որոնց յուրացման մակարդակը նշանակալիորեն կանխորոշում է հետագա ուսուցման հաջողությունը: Կրթության հիմնական արդյունքը դիտարկվում է որպես աշակերտների՝ զարգացման նոր մակարդակներին հասնելու միջոց՝ առանձնահատուկ դեր ունենալով ուսումնասիրվող առարկաների համար: Կրթական համակարգում հետազոտական մոտեցման իրացումը պահանջում է նոր կազմակերպման համակարգ՝ հաշվի առնելով աշակերտի և ուսուցչի համատեղ գործունեության պլանավորման հիմքը: Մի շարք մանկավարժների և հոգեբանների աշխատություններում նշվում է, որ մտածողության եզակիությունը բխում է համագործակցության կարողությունից, ինչի արդյունքում լիովին դրսևորվում են դպրոցականների ստեղծագործական հմտությունները և զարգանում են հետազոտական կարողությունները: Այս փաստն արդիական է համարվում դպրոցի աշակերտների համար, քանի որ հենց այս տարիքում է ուսումնական գործունեությունը դառնում ղեկավարող՝ որոշելով կրտսեր դպրոցականի հիմնական ճանաչողական առանձնահատկությունների զարգացումը: Հետազոտական կարողությունը հատուկ է ցանկացած երեխայի, ով գալիս է դպրոց [9, էջ 20]:

Հետազոտությունը անհայտի, նոր գիտելիքների որոնման գործընթացն է, ճանաչողական գործունեության տեսակներից մեկը: Հետազոտական ուսուցումը սովորողների մոտ ձևավորում է ինքնուրույնություն: Որպեսզի երեխան կարողանա մասնակցել հետազոտական գործունեությանը, նա պետք է կարողանա ինքնուրույն մտածել, որոնել ու լուծել խնդիրներ՝ այս նպատակի համար ներգրավելով գիտելիքներ տարբեր ոլորտներից, ունենա արդյունքներ ու լուծման տարբերակների հնարավոր հետևանքերը կանխատեսելու կարողություն, պատճառահետևանքային կապերը սահմանելու ունակություններ: Հետազոտական աշխատանքների իրականացումը, ի տարբերություն ուսումնական գործունեության այլ ձևերի, թույլ է տալիս առավել արդյունավետ և աստիճանաբար իրականացնել անցում ավանդական մոտեցումներից դեպի նոր պրոգրեսիվ ուսուցմանը:

Ուսուցման հետազոտական մոտեցումն ուղղված է դպրոցականների հետևյալ կարողությունների զարգացմանը՝

- ինքնակրթության կարողություն,
- տեղեկատվական հոսքում կողմնորոշվելու հմտություններ,
- խնդիրը տեսնելու, հասկանալու և լուծելու կարողություն:

Հետազոտական կողմնորոշումը կենտրոնացնում է ուսումնական գործընթացում նորարարական մոտեցումը, որի նպատակը աշակերտների նոր հմտություններին տիրապետելու հնարավորության զարգացումն է:

Սովորողների ուսումնահետազոտական գործունեությունը ժամանակակից դպրոցի ուսուցման առաջադիմական ձևերից մեկն է: Այն թույլ է տալիս զարգացնել սովորողների թե՛ ինտելեկտուալ, թե՛ ստեղծագործական հմտությունները: Տվյալ ուղղությամբ դպրոցի մանկավարժի նպատակը դպրոցականների հետազոտական կարողությունների ձևավորման ու զարգացման համար պայմանների ստեղծումն է:

Հետազոտական ունակությունների ձևավորման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները՝

- համակարգվածություն. համակարգվածության զարգացման ուղղությունը պետք է տարվի ն՝ դասարանական, ն՝ արտադասարանական գործունեության ընթացքում,
- դրդապատճառներ/ մոտիվացիա. ուսուցիչն օգնում է աշակերտին ինքնագարգացման ճանապարհին հետազոտական գործունեության միջոցով տեսնել իր օժտվածության և ունակությունների դրսևորման հնարավորությունը,
- հոգեբանական գործոն. խրախուսել երեխաների ստեղծագործական դրսևորումները: Ուսուցչի խնդիրն է աջակցել աշակերտների ստեղծագործական գաղափարների իրականացումը,
- տարիքային առանձնահատկություններ. հետազոտությունը պետք է լինի հետաքրքիր և հնարավորինս իրականանալի: Այս առումով հետաքրքրական է Ա. Ի. Սավենկովի կարծիքը, այն է՝ «երեխայի վզին փաթաթած» թեման, որքան էլ մեզ՝ մեծերիս, կարևոր թվա, անհրաժեշտ արդյունք չի ունենա: Բնականաբար, որպեսզի երեխային հետաքրքրող թեմա ընտրենք, նրա հակումները պիտի իմանանք: Երեխային լսել, հասկանալ, նրա հետաքրքրությունները զգալ կարողանալը բարդ, սակայն լրիվ իրագործելի մանկավարժական խնդիր է: Ուսուցչի վարպետությունը երեխային օգնելն է՝ այնպիսի ընտրություն կատարել, ինչը կհամընկնի նրա մտավոր կարողությունների և հետաքրքրությունների սահմանին. դա այնպիսի սպավորություն է թողնում, որ երեխան ինքը կընտրեր հենց այդ թեման [3, էջ 9]:

Հետազոտական գործունեության հիմքն են կազմում՝

- սովորողների ճանաչողական կարողությունների և հմտությունների զարգացումը,
- սեփական գիտելիքներն ինքնուրույն համակարգելու կարողությունը,
- գիտության տարբեր ոլորտներից գիտելիքներին ինտեգրելու կարողությունները,
- կրիտիկական մտածողության կարողությունը:

Հաշվի առնելով դպրոցում սովորելու ժամկետը և դպրոցականների համար գործունեության առանձին միջոցների կարևորությունը՝ անհրաժեշտություն է առաջանում առանձնացնել գործողությունների այնպիսի խումբ, որոնք էական նշանակություն ունեն հետազոտական կարողությունների ձևավորման գործընթացում և հասանելի են ուսուցման սկզբնական փուլի նյութը յուրացնելու համար:

Համակարգելով գիտնականների հետազոտությունները, մանկավարժական փորձը [7, 14, 18, 20, 25] և մեր սեփական դիտարկումները՝ մենք մշակել ենք հետազոտական կարողությունների ձևավորման հետևյալ ուղղությունները, որոնք ձևավորվում են աստիճանաբար: Այսպես, այդ ուղղություններն են՝

- խնդիրը գիտակցելու կարողություն. երեխայից չի կարելի պահանջել, որ նա, սկսելով հետազոտությունը, հստակ ձևակերպի խնդիրը, քանի որ այն հաճախ ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ խնդիրն արդեն լուծված է: Հարկ չէ պահանջել խնդրի հստակ ձևակերպում, նպատակի կորնկրետ բնութագրում: Բավարար է միայն դրա մոտավոր բնութագրումը,
- հարցեր տալու կարողություն. հետազոտության ընթացքում հարցը առանցքային նշանակություն ունի: Հարցերի առաջադրումը երեխայի մտածողությունն ուղղում է պատասխաններ գտնելուն՝ հանգեցնելով ճանաչողության պահանջին,
- վարկածներ առաջադրելու կարողություն. վարկածը ենթադրություն է, որն ապացուցված է տրամաբանորեն, սակայն հաստատված չէ փորձով,
- հասկացությունները բնութագրելու կարողություն. սրա էությունն այն է, որ երեխան ցույց տա, թե ի՞նչ է նշանակում տվյալ հասկացությունը,
- դասակարգելու կարողություն. ստացված տեղեկությունը ճիշտ դասակարգել կարողանալու ունակություն,
- դիտողականության կարողություն. հետազոտությունը հնարավոր դարձնելու համար անհրաժեշտ է ունենալ դիտողականություն, որը բնութագրվում է նպատակաուղղվածությամբ,
- փորձեր անցկացնելու կարողություններ և հմտություններ. փորձը հետազոտության կարևորագույն մեթոդն է: Ցանկացած փորձ պահանջում է

պրակտիկ գործողությունների իրականացում ստուգման և համեմատության նպատակով,

- քննարկումներ իրականացնելու կարողություն. քննարկումն առարկաների և երևույթների մասին արտահայտվելն է, որը ամբարվում է ինչ-որ մի բանի հաստատման կամ ժխտման արդյունքում,
- եզրակացություններ անելու կարողություն. ստացված տեղեկությունները համակարգելու և դրանց վերաբերյալ մտահանգումներ կատարելու կարողություն,
- հետազոտական աշխատանք կազմելու կարողություն. հետազոտական աշխատանքը օգնում է ու սովորեցնում պատանի հետազոտողներին աշխատել տեղեկատվական տարբեր աղբյուրների՝ հատկապես գրքերի, հոդվածների հետ՝ Այստեղ էական նշանակություն ունեն նաև տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները՝ Պետք է նշել, որ ժամանակակից կրթական համակարգում արագորեն տարածում է գտնում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, որին տիրապետելը հավասարազոր է համարվում կարդալուն և գրելուն՝ Այսօր, կարելի է ասել, որ անհնար է որակյալ և մատչելի ուսուցում իրականացնել առանց SՀS-ի օգտագործման. անհրաժեշտություն է դառնում ավանդական ուսուցման մեթոդները փոխարինել կամ դրանց զուգահեռ կիրառել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների նորարար միջոցներն ու մեթոդները՝ հաշվի առնելով, որ SՀS-ի մուտքը ուսումնական գործընթացի մեջ մղում է աշակերտներին ստեղծագործական-հետազոտական աշխատանքի: Այստեղ նպատակահարմար ենք գտնում տալ SՀS-ի սահմանումը, այն է՝ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները (SՀS կամ SՀՆՏ Տեղեկատվության և հաղորդակցման նոր տեխնոլոգիաները, անգլերեն՝ IT՝ Information Technology) խմբավորում են այն մեթոդները, որոնք օգտագործվում են հատկապես ինֆորմատիկայի, համացանցի և հեռահաղորդակցման տեղեկատվությունը մշակելու և փոխանցելու նպատակով՝ Բացի այդ՝ SՀS ասելով հասկանում ենք նաև համակարգչային տեխնոլոգիաները, քանի որ SՀS-ներն առնչվում են

համակարգիչների և ծրագրային ապահովման հետ տեղեկության ստեղծման, պահպանման, մշակման, փոխանցման և ստացման համար՝ SՆՏ միջոցների հիմքում ընկած է անհատական համակարգիչը՝ համալրված հարակից սարքավորումներով [2, էջ 9-10]:

Վերոնշյալ հետազոտական կարողությունների ուղղություններն իրենց ամփոփումն են ստանում հետազոտական աշխատանքի մեջ, որը բաղկացած է հետևյալ փուլերից՝

- թեմայի ընտրություն,
- նպատակի և խնդիրների առաջադրում,
- հետազոտության վարկածի առաջադրում,
- հետազոտության կազմակերպում,
- աշխատանքի պաշտպանություն [15, էջ 2]:

Սովորողների հետազոտական գործունեության հաջողությունը մեծամասամբ պայմանավորված է ուսուցչի աշխատանքի իմաստայից պլանավորմամբ, ով պարբերաբար ուղղորդում և մոտիվացնում է աշակերտներին, ինչպես նաև համակարգում է նրանց աշխատանքը՝ Կազմակերպելով հետազոտական գործունեությունը՝ ուսուցիչը դառնում է ոչ միայն պատրաստի գիտելիքների կրող, այլ նաև սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպիչ, օգնում է առաջ տանել ու քննարկել ենթադրությունները, ընդունել որոշումներ, խրախուսում է յուրաքանչյուր երեխայի նախաձեռնությունը, օգնում է նրան ինքնուրույն տեղաշարժվել դեպի նպատակը: Ուսուցիչը առաջացնում է հետաքրքրասիրություն աշակերտների մոտ, իսկ վերջիններս ինքուրույն փորձում են գտնել պատասխաններ, ստուգել նրանց ճշգրտությունը արդեն եղած գիտելիքների հիման վրա, փորձում են կատարել եզրակացություններ: Ստացված տեղեկատվությունը հետազոտողը կարող է կիրառել արդեն նոր խնդրի լուծման ժամանակ՝ համեմատելով նյութերը և հավաքելով այդ ամենը մեկ միասնության մեջ: Բայց այս գործունեության արդյունքը հնարավոր է միայն մանկավարժի վերահսկողությամբ:

ԳԼՈՒԽ 2.ՄԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՓՈՐՁԻՑ

Մեր մանկավարժական գործունեության ընթացքում բազմիցս իրականացրել ենք ինքնուրույն բնույթի աշխատանքներ՝ նպատակ ունենալով խթանել սովորողների ինքնուրույն մտածելու, գործելու կարողությունը: Նմանօրինակ դասերը հատկապես կրտսեր դպրոցում բավականին արդյունավետ են, քանի որ նաև հնարավորություն են տալիս մեզ՝ ուսուցիչներիս, հետադարձ կապի օգնությամբ մշտադիտարկել սովորողների առաջընթացը, դժվարություններն ու անհատական կարիքները: Բերենք նմանօրինակ աշխատանքներով ուղեկցվող դասի օրինակ:

Երկու առանձին դասեր ենք անցկացրել 5-րդ դասարանում, որտեղ սովորում են 16 աշակերտ: Առաջին դասն ամփոփման դաս էր և նպատակն էր համակարգել սովորողների գիտելիքները բնական թվերի հետ գործողություններ կատարելու առումով: Դասաժամի նպատակն էր նաև արձանագրել դասարանում սովորողների հետաքրքրվածության աստիճանը մաթեմատիկա առարկայով և դասի ժամանակ ներկայացվող նյութով: Հարկ է նշել, որ դասը պլանավորել էինք ավանդական եղանակով, սովորողների շրջանում որևէ առանձնակի ոգևորություն չնկատեցինք, ուշադիր և ակտիվ էին հիմնականում այն աշակերտները, ում մոտ ստացվել էր առարկայի արդյունավետ յուրացումը, ով նախապատվություն ուներ մաթեմատիկայի հանդեպ: Մեկ աշակերտ չափազանց պասիվ էր և չէր ցուցաբերում որևէ հետաքրքրություն ուսումնասիրվող թեմայի շուրջ, երկուսը դժվարությամբ էին համագործակցում և արձագանքում էին ուսուցչին միայն նրա անմիջական հարցից հետո: Դասը հիմնականում կառուցված էր հարցերի ու պատասխանների, գրատախտակի մոտ առաջադրանքների կատարմամբ, որի ընթացքում սովորողների մեծ մասն ուղղակի մեխանիկորեն արտագրում էր:

Ավանդական մեթոդով իրականացված դասի ավարտին աշակերտներին առաջարկվեց լրացնել փոքր հարցաթերթ՝ մաթեմատիկա առարկայի հանդեպ հետաքրքրությունը պարզելու համար:

Հարցաթերթի օրինակ՝

- Միրում էք մաթեմատիկա առարկան:
- Ինչքանով է հետաքրքիր մաթեմատիկա առարկան:
- Ինչքանով էր հետաքրքիր այսօրվա դասը:

- **Կցանկակայի՞ք մաթեմատիկայի դասաժամերը շատ լինեին:**

Կարող ենք փաստել, որ հարցաթերթերի արդյուքներով սովորողների հետաքրքրության մակարդակը բավականին ցածր էր:

Հաջորդ հետազոտական դասի ընթացքում աշակերտների հետաքրքրությունը խթանելու նպատակով կիրառեցինք մի շարք մեթոդներ և տեխնիկական հնարքներ, այդ թվում՝ ինքնուրույն և խմբային աշխատանքներ: Մասնավորապես, նոր նյութի բացատրման ժամանակ աշակերտներին առաջարկվեց ինքնուրույն կարդալ դասի տեսական մասը և դասընկերոջը բացատրել այն, ինչ ինքն է հասկացել դասից: Զուգահեռ սովորողները ստացան տեքստային խնդիրներով քարտեր: Այն սովորողները, ովքեր դժվարացան ինքնուրույն աշխատել, հնարավորություն ստացան աշխատել զույգերով:

Առաջադրանքի օրինակներ՝

ABCD ուղղանկյան մի կողմը 12 սմ է, իսկ մյուսը՝ 4 անգամ փոքր է: Որոշիր ուղղանկյան պարագիծը:

Այգում տնկեցին 141 տանձենի, 25-ով շատ խնձորենի, իսկ բալենու ծառերի թիվը 31-ով շատ է խնձորենիներից: Քանի՞ ծառ տնկեցին այգում: Համառոտագրիր նոր լուծիր

Գրախանութում կա 1680 դասագիրք, որը 245 -ով ավել է ամսագրերի թվից: Քանի՞ ամսագիր կա խանութում: Համառոտագրիր, նոր լուծիր:

Նշիր այնպիսի քառանիշ թիվ, որի տասնավորը 4-ով մեծ լինի միավորից:

Սովորողները, ովքեր աշխատեցին զույգերով, հնարավորություն ստացան համագործակցել, միասին քննարկել խնդիրը, գտնել լուծման հնարավոր եղանակները: Իրականացվեց նաև աշխատանք շարքերով: Ըստ էության՝ սովորողներն աշխատում էին ինքնուրույն, սակայն վաստակած միավորը տրվում էր շարքին: Այսպես մեծանում էր սովորողների մոտիվացիան, աշխատանքը հաջողությամբ կատարելու ցանկությունը:

Առաջադրանքի օրինակ՝

1. Գործողություններ չկատարելով՝ համեմատի՛ր արտահայտության արժեքները.ա.

$$98765+479 > 98765+478$$

$$բ. 98765-478 > 98765-479$$

$$գ. 56789+289 > 53798+299$$

$$դ. 53789-299 < 56798-289$$

2. Աստղանիշը փոխարինիր թվերով.

$$ա. (18+14)+30=62 \quad \text{դ. } 71+10 \cdot 17 = 241$$

$$բ. (70-26)+20=64 \quad \text{ե. } 211-11 \cdot = 46$$

$$գ. 111-(33+36)=42 \quad \text{զ. } 13 \cdot (10+*)=221$$

Այսպիսով, դասարանում ստեղծվեց ընդհանուր համագործակցային մթնոլորտ և առողջ մրցակցային պայմաններ գույգերի միջև: Առաջադրանքը կատարելուց հետո յուրաքանչյուր գույգ հանդես եկավ իր կատարած աշխատանքով և պատասխանեց ուսուցչի ուղղորդիչ հարցերին: Այս դասի ընթացքում նկատվեց աշակերտների զգալի ակտիվությունը և ձգտումը առավել արդյունավետ կերպով կատարել առաջադրանքները: Նաև այս պայմաններում կարևոր էր ուսուցչի ակտիվ ներգրավվածությունը դասապրոցեստում, ով հայտորոշիչ և ուղղորդիչ հարցադրումներով ակտիվացնում էր աշակերտներին, խթանելով նրանց կողմից առավել մեծ հետաքրքրություն առարկայի հանդեպ, քան նախկինում էր: Այսպիսով, երկրորդ հետազոտական դասի արդյունքում աշակերտները մեծամասամբ մասնակցում էին դասապրոցեսին, կատարում էին առաջադրանքներն ինքնուրույն, գույգերով, խմբերով: Այս պարագայում առավել թույլ և չկողմնորոշվող սովորողները հնարավորություն ունեցան գույգեր կազմել առավել բարձր առաջադիմություն ունեցող դասընկերների հետ՝ արդյունավետ համագործակցության համար:

Դասի ավարտին սովորողներին բաժանվեցին նույն հարցաթերթը և ստացված արդյունքները բավականին գոհացուցիչ էին, քանի որ պատկերը զգալի կերպով փոխվել էր, սովորողների հետաքրքրվածությունը առավել բարձր էր:

Մա թույլ է տալիս խոսել այն մասին, որ նորարական մեթոդների կիրառումը դասի ժամանակ, ինքնուրույն, զույգերով աշխատանքի խթանումը, առաջադրանքների լուծման հետաքրքիր տարբերակների ներկայացումը, ինչպես նաև մաթեմատիկա առարկայի կապակցումը իրական կյանքի դրվագների, իրական փորձի հետ թույլ է տալիս զգալի կերպով աշակերտների մեջ հետաքրքրություն սերմանել մաթեմատիկայի հանդեպ: Քանի որ այսպիսի գործնական աշխատանքների ընթացքում աշակերտները աստիճանաբար հասկանում են, որ այս առարկան սերտորեն կապված է իրենց շրջպատի հետ, մաթեմատիկական տարրական գիտելիքները անհրաժեշտ են մարդուն յուրաքանչյուր քայլափոխին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գիտամեթոդական համապատասխան գրականության ուսումնասիրության, ինչպես նաև կատարված հետազոտական աշխատանքի արդյունքում, կարելի է եզրակացնել՝

- Սովորողների հետազոտական կարողությունների ձևավորման գործընթացն այսօր հանդիսանում է մանկավարժության արդի հիմնախնդիր. կարևոր է, որ աշակերտներն ինքնուրույն ձեռք է բերեն անհրաժեշտ տեղեկատվությունը, դրսևորեն որոնողական ակտիվություն և հետազոտական վարքագիծ՝
- Աշակերտների հետազոտական կարողությունների ձևավորման գործում մեծ նշանակություն ունի տարրական դպրոցի մանկավարժական գործընթացը, քանի որ կրտսեր դպրոցական տարիքում ձեռք բերված կարողություններն ու հմտությունները նշանակալիորեն կանխորոշում են հետագա ուսուցման հաջողությունը:
- Հետազոտական կարողությունների ձևավորման գործընթացն անհրաժեշտ է սկսել առաջին դասարանից և աստիճանաբար զարգացնել հաջորդ դասարաններում՝ նպաստելով կրտսեր դպրոցականների ակտիվության, ինքնակրթության, որոնողական ու ստեղծագործական, վերլուծական կարողություններ ձևավորմանը:
- հետազոտական կարողությունների ձևավորման արդյունավետ ուղիներն են՝
 - դպրոցականների մոտ ձևավորել տեղեկատվական հոսքում ճիշտ և արագ կողմնորոշվելու կարողություն,
 - կրտսեր դպրոցականների մոտ ձևավորել խնդիրը տեսնելու, հասկանալու և վերլուծելու կարողություններ,
 - հաշվի առնել դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունները, հետաքրքրություններն ու ունակությունները,

- դասերին ստեղծել անկաշկանդ մթնոլորտ, համագործակցային փոխհարաբերություններ,
- կիրառել տարաբնույթ խաղեր, տրամաբանական խնդիրներ և ինտելեկտուալ գլուխկոտրուկներ, որոնողական աշխատանքներ, քննարկումներ, զրույցներ և այլն՝ ուղղված կրտսեր դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը,
- հետազոտական աշխատանքները լինեն հետաքրքրական, ունենան անսպասելիության տարրեր և լինեն կարճաժամկետ!

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գասպարյան Վ., Հեռուստատեսության ազդեցությունը կրտսեր դպրոցականների սոցիալական ոչ համարժեք դիրքորոշումների և համոզմունքների ձևավորման վրա, (<http://www.academia.edu/32708457/%D4%B4%D5%AB%D5%BA%D5%AC%D5%B8%D5%B4%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6>, հասանելի է 15.05.2019):
2. Հակոբյան Մ., Պողոսյան Մ., ՏՀՏ-ի կիրառումը կրթական համակարգում, Երևան, 2018, 183 էջ
3. Մուսայելյան Մ., Կրտսեր դպրոցականների հետազոտական գործունեությունը՝ որպես ինքնուրույնության և անհատականության զարգացման ճանապարհ, «Նախաշավիղ», Երևան, 2014, հ. 3, էջ. 8-18:
4. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Կին, 1969, 317 էջ
5. Андреев В. И., Эвристическое программирование учебноисследовательской деятельности, Москва, 2014, 240 с.
6. Ахмадишина Л. Р., Формирование межличностных отношений детей младшего школьного возраста средствами дидактических игр, Екатеринбург, 2018, (<http://elar.uspu.ru/bitstream/uspu/9996/2/10Akhmadishina.pdf>, հասանելի է 15.05.2019).
7. Богоявленская Д. Б., Исследовательская деятельность как путь развития творческих способностей // Исследовательская деятельность учащихся в современном образовательном пространстве, Москва, 2010, сс. 40-50.
8. Громова Т. И., Особенности организации исследовательской деятельности школьников в экологическом лагере, автореф. ... канд. пед. наук, Москва, 2008, 12 с.
9. Грунина Г. М., Организация творческой и поисковой деятельности учащихся // Завуч. Все для работы, 2013, № 13, сс. 18 - 23.
10. (<https://multiurok.ru/files/metodicheskie-rekomendatsii-uchiteliam-nachalnykh.html>,
11. (<https://cyberleninka.ru/article/n/struktura-urokov-tehnologii-raznyh-tipov-kakov-mehanizm-postroeniya-metodicheskikh-shem-problemnyh-urokov-tehnologii>,

